ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետվությանը ներկա էր Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ պարոն Ա. Հովհաննիսյանը , գյուղապետարանի աշխատակազմը և համայնքի բնակիչներ:

Ամփոփելով Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի 2011 թվականի 1-ին կիսամյակի կատարած աշխատանքները պարզվել է՝

Ֆինանսական –

Նախատեսված է հողի հարկ	- 9 500. 0 դ	հավաքվել է	2629.7
գույքահարկ	- 2 500. 0 դ		880.7
տույժեր		գանձվել է	190.0
վարձակալական հողի վճար	- 22.3		6.2
դոտացիա	- 18 679 .9		9340.0

Աղբահանություն - նախատեսվել է 1140.0 վճարվել է

որից շրջիկ մեխանիզատորին 420.0

Ջրամատակարարում - Խմելու ջուրը ստանում ենք ինքնահոս եղանակով / Բազմաղբյուրից / սակայն ստացված ջուրը շատ քիչ է գյուղի ազգաբնակչությանը նորմալ մատակարարումը կազմակերպելու համար: Թաղամասերում տեղադրված են ծորակներ 12 հատ և բնակիչները 500-մետրից ավելի տարածք են անցնում խմելու ջուր տանելու համար, իսկ շուրջ 67 տնտեսություն ջրաչափեր են տեղադրել սակայն ջուրը չի բավարարում:

Նախատեսվում է էջմիածին քաղաքից 1300 մետր ջրագիծ կառուցել ջրամատակարարումը բավարարելու համար և 3000 մետր ներտնտեսային ցանցը վերականգնել:

Գյուղապետարանը և նրա ենթակա կառույցները աշխատավարձի և սոցիալական վճարների պարտքեր չունի:

Աղբահանությունը - կատարվում է շրջիկ տրակտորի միջոցով շաբաթը 2 անգամ, շրջելով փողոցները մաքրվում է ջրատար առուները և բնակչության կողմից կուտակված կենցաղային աղբը:

2011 թվականի 1-ին կիսամյակում մարզպետարանի ճանապարհաշինության ծրագրերի հաշվին կատարվել է 300 քառ. մետր ասֆալտի փոսային նորոգումներ , իսկ 390 քառ. մետր կատարվել է գյուղապետարանի միջոցների հաշվին : Առաջիկայում ևս 600 քառ. մետր կնորոգվի գյուղապետարանի միջոցների հաշվին:

Համայնքի ղեկավար Զ Միրզախանյան